ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ԲՊ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արդյունքների ամփոփման նիստի

ք.Գյումրի «17» դեկտեմբեր 2019թ. 12:21

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ն.Հովհաննիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Լ.Զախոյան, Ս.Դարբինյան, Ա.Կարապետյան, Տ.Մարտիրոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Հարությունյան

1. «ԲՊ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով մրցույթի արդյունքների ամփոփման մասին.

/Ն. Հովհաննիսյան/

«Բեռլին պոլիկլինիկա» ՓԲԸ կողմից դեղորայքի ձեռքբերման համար հայտարարված «ԲՊ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով ԳՀ մեթոդով ընթացակարգի շրջանակներում առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների համար 03.12.2019թ.-ին հարցում է ուղարկվել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ նշված ծածկագրով մրցույթի մասնակիցներ՝ «Նատալի ֆարմ» ՍՊԸ, «Ալֆա ֆարմ» ՓԲԸ, «Վագա ֆարմ» ՍՊԸ և «Հերմո ֆարմ» ՍՊ ընկերությունների հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ և ՀՀ ՖՆ ՏՏԵՆԶ վարչության աշխատակցի կողմից 05.12.2019թ.-ին ներկայացվել է դրական եզրակացություն:

Մասնակիցներին 06.12.2019թ. armeps.am համակարգով ծանուցվել է առաջին տեղ զբաղեցնելու և հրավերով սահմանված համապատասխան փաստաթղթեր ներկայացնելու մասին: Ընկերությունների կողմից ծանուցման մեջ նշված ժամկետում ստացվել են փաստաթղթերը:
«Վագա ֆարմ» ՍՊԸ կողմից համապատասխան փաստաթղթերը գնահատվել են բավարար:
«Նատալի ֆարմ» ՍՊԸ, «Ալֆա ֆարմ» ՓԲԸ և «Հերմո ֆարմ» ՍՊ ընկերությունների կողմից ստացված փաստաթղթերում տեղ են գտել որոշակի անհամապատասխանություններ՝ հրավերում նշված պահանջների նկատմամբ:
12.12.2019թ. վերոգրյալ մասնակիցներին ուղարկվել են ծանուցումներ՝ տեղ գտած անհամապատասխանությունները սահմանված ժամկետում շտկելու և կրկին յներկայացնելու վերաբերյալ: Փաստաթղթերը շտկվել և կրկին ներկայացվել են «Բեռլին պոլիկլինիկա» ՓԲԸ:

Այսպիսով, համաձայն ՀՀ կառավարության 526-Ն որոշման՝ վերոգրյալ կազմակերպությունների կողմից ներկայացված տվյալները համարվում են իրականությանը համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5,դեմ 0:

2. Հանձնաժողովը որոշեց՝

«Նատալի ֆարմ» ՍՊԸ, «Ալֆա ֆարմ» ՓԲԸ, «Վագա ֆարմ» ՍՊԸ և «Հերմո ֆարմ» ՍՊ ընկերություններին համապատասխան չափաբաժինների գծով ճանաչել հաղթող մասնակիցներ և ընկերություններին ծանուցելով այդ մասին՝ առաջարկել կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5,դեմ 0:

Հանձնաժողովի՝

Նախագահ՝ _____ Ն.Հովհաննիսյան

Անդամներ՝ _____ Ս.Դարբինյան

_____ Լ.Զախոյան

_____ Ա. Կարապետյան

_____ Տ.Մարտիրոսյան

Քարտուղար՝ _____ Ա.Հարությունյան